ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» մայիսի 2021թ. № 222

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասով, 104-րդ հոդվածի 5-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների անցկացման համար Լոռու մարզի Սպիտակ համայնքի տարածքում տեղամասային կենտրոններ սահմանել.

1) ընտրական տեղամաս 22/17- կենտրոնը՝ թիվ 5 հիմնական դպրոցի շենք
(հասցեն՝ ք. Սպիտակ, Իտալական թաղամաս 176)

2) ընտրական տեղամաս 22/18- կենտրոնը՝ թիվ 8 միջնակարգ դպրոցի շենք
(հասցեն՝ ք. Սպիտակ, ՈՒզբեկական թաղամաս 64)

3) ընտրական տեղամաս 22/19- կենտրոնը՝ «Սպիտակի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենք
(հասցեն՝ ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փողոց 283)

4) ընտրական տեղամաս 22/20- կենտրոնը՝ Ս. Ավետիսյանի անվան ավագ դպրոցի շենք
(հասցեն՝ ք. Սպիտակ, Խնկոյան փողոց 5)

5) ընտրական տեղամաս 22/21- կենտրոնը՝ թիվ 2 հիմնական դպրոցի շենք
(հասցեն՝ ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փողոց 1)

6) ընտրական տեղամաս 22/22- կենտրոնը՝ թիվ 3 հիմնական դպրոցի շենք
(հասցեն՝ ք. Սպիտակ, Պանրագործների փողոց)

7) ընտրական տեղամաս 22/23-կենտրոնը՝ թիվ 1 հիմնական դպրոցի շենք
(հասցեն՝ ք. Սպիտակ, Մյասնիկյան փողոց 1)

8) ընտրական տեղամաս 22/24- կենտրոնը՝ թիվ 4 հիմնական դպրոցի շենք

(հասցեն՝ ք. Սպիտակ Այգեստան 53)

9) ընտրական տեղամաս 22/25 – կենտրոնը՝ «Հրաչիկ Աջամյան» ՍՊԸ-ի շենքը

(հասցեն՝ ք. Սպիտակ, Ալ. Մանուկյան փող. 5)

2. Սույն որոշման մասին տեղեկացնել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Սպիտակի տարածքային ստորաբաժանմանը, թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնների տարածքները տիրապետողներին:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 18

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» մայիսի 2021թ. № 223

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին նախընտրական քարոզչություն իրականացնելու համար քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Երևանյան խճուղուց Իտալական-Շվեյցարական թաղամասեր տանող ճանապարհի աջակողմյան շինություն-20քմ

2) Ս.Ավետիսյան փողոցի թիվ 6 բազմաբնակարան բնակելի շենքի արևմտյան ճակատ-30քմ

3) Ս.Ավետիսյան փողոցի թիվ 7 բազմաբնակարան բնակելի շենքի արևելյան ճակատ-30քմ

4) Ս. Ավետիսյան փողոցի թիվ 20 բազմաբնակարան բնակելի շենքի երկու ճակատները - 2 x 30քմ

5) Ս. Ավետիսյան փողոցի թիվ 15/1 և 17/2 բազմաբնակարան բնակելի շենքերի արևմտյան ճակատները – 2 x 30քմ

2. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Գյուլազյանին՝ սույն որոշման մեկ օրինակը եռօրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 18
ք.Սպիտակ